



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՄԷԶ

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՒ ԲԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՓՈՒՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԿԵԻՆ ՆԻՄԸՄԻ ՀԵՏ

Սան Ֆրանսիսքո իր այցելութեան առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Բալիֆորնիոյ փոխ կառավարիչ Կեյն Նիւըմի:

Հանդիպումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 21 Հոկտեմբերի յետմիջօրէին, Նորին Ս. Օծութեան իջեւանած պանդոկի մէկ հիւրասրահին մէջ: Ներկայ էին Վեհափառի շքախումբի անդամներ:

Հանդիպումը անցաւ մտերմիկ մթնոլորտի մէջ, մանաւանդ, որ հովուապետական նախորդ այցելութեան օրերուն, 2005ի Հոկտեմբերին, Նիւըմի Սան Ֆրանսիսքոյի քաղաքապետն էր ու Վեհափառ Հայրապետին իր քաղաքը այցելութեան առիթով՝ Հայրապետը հիւրընկալած էր քաղաքապետարանին մէջ:

Նիւըմի յայտնեց, թէ եկած է իր յարգանքը փոխանցելու Վեհափառ Հայրապետին, որուն հետ ունի անցեալէն եկող բարեկամութիւն: Վեհափառ Հայրապետը գնահատանքով արտայայտուեցաւ Նիւըմի արդարատենջ կեցուածքներուն համար, յիշելով, որ քաղաքապետի իր օրերուն թէ ներկայիս, իբրեւ նահանգի փոխ կառավարիչ՝ կանգնած է Տեղասպանութեան ճանաչման կողքին:

Հանդիպումի աւարտին, Վեհափառն ու փոխ կառավարիչը յուշանուէրներ փոխանակեցին:

Յիշեցնենք, որ աւելի քան շաբաթ մը առաջ, Վեհափառ Հայրապետը Լոս Անճելըսի մէջ հանդիպում ունեցած էր Բալիֆորնիոյ կառավարիչ ճերի Պրաունի հետ:

## HIS HOLINESS CATHOLICOS ARAM I MEETS WITH LIEUTENANT GOVERNOR GAVIN NEWSOM

On the afternoon of Friday, October 21, 2011, His Holiness Catholicos Aram I met with California Lieutenant Governor Gavin Newsom at the Fairmont

Hotel in San Francisco. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, joined His Holiness at the meeting.

It was not the first meeting between His Holiness and the Lieutenant Governor. During the Pontifical Visit of His Holiness in 2005, then San Francisco Mayor Gavin Newsom had hosted His Holiness at City Hall.

Lieutenant Governor Newsom stated that he had come to offer his respects to His Holiness, with whom he had forged a friendship in the past. His Holiness commended the Lieutenant Governor for his principled stand on issues concerning the Armenian community, noting that since his days as Mayor to the present, the Lieutenant Governor has always advocated for recognition of the Armenian Genocide.

At the conclusion of the meeting, His Holiness presented Lieutenant Governor Newsom with a memento, and the Lieutenant Governor presented the Pontiff with a framed proclamation.